ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026թ. թիվ 343-Ա

Տ.ՆԵՐՍԵՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 92-րդ հոդվածի 3-րդ մասի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37.1 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2025 թվականի մայիսի 19-ի թիվ 234-Ա, 2025 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 562-Ա, 2025 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 674-Ա և 2026 թվականի ապրիլի 9-ի թիվ 232-Ա որոշումները՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Տաթևիկ Ներսեսյանի նկատմամբ սահմանված փորձաշրջանի ժամկետը երկարաձգել մինչև 2026 թվականի հունիսի 26-ը ներառյալ:

2. Փորձաշրջանի ղեկավար Նաիրա Հարությունյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, գնահատել փորձաշրջանի ընթացքում տնօրենի կատարած աշխատանքները և մասնագիտական հանձնաժողովին ներկայացնել տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Ստորագրող
ԱՐՍԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ
2414880046

2026-05-20 18:33:27 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. մայիսի 20
ք.Վանաձոր